

# ՌՈՒՄԲԵՐ ՍԻՍԻԱՆԻ ՇՐՋԱՆԸ

## Բ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ՊՈԼԻՍ ԳՆԱՑ

Սեպտեմբեր 8-ին ալ, ազրբեջանական ղինուած խումբերը հրասայլերով եւ հետեւակի ղինուորական մեքենաներով Նախիջևանի տարածքէն ուժեղացած են Սիսիանի շրջանի Բոնակոթ եւ Շաղաթ ղիւղերը: Հայկական ինքնապաշտպանութեան ուժերը պատասխանած են եւ փոխադարձ հրացանաձգութիւնը տեւած է ամբողջ օրը: Նախորդ օրն ալ Գեղարեկի, Զանդեւանի եւ Դաուղի շրջաններէն կրակ բացուած է կրասնոսելսկի վերին ճամբարակ, կապանի Սիւնիք եւ ճակատէն, Տաուշի Այդեձոր ղիւղերու վրայ: Երկու վիրաւոր կայ:

\*\*

Սեպտեմբեր 8-ին, նախադահ Լ. Տէր-Պետրոսեան աշխատանքի հանդիպում մը ունեցած է Ղարաբաղի Գերագոյն Խորհուրդի նախագահի պաշտօնակատար Գէորդի Պետրրոսեանի հետ: Քննակուած են երկու Հանրապետութիւններու համար կենսական վարեւորութիւն ներկայացրնող կարգ մը հարցեր, մասնաւորաբար Ղարաբաղի իրավիճակը եւ մարդասիրական օգնութիւնը աւելի արդիւնաւէտ դարձնելու հարցը:

\*\*

Զորեքշարթի, Սեպտեմբեր 9, ժամը 12.10-ին Պոլսոյ օդակայանը կը ժամանէր Հայաստանի Արտաքին նախարար՝ Ռաֆֆի Յովհաննէսեան, որ իրրեւ դէտ պիտի մասնակցի Եւրոպայի Խորհուրդի արտաքին նախարարներու ժողովին:

Նոյն իրիկունը, ժամը 6-ին, Պատրիարքարանը ընդունելութիւն մը կազմակերպած էր ընդառաջելով Հայաստանի նախարարին փափաքին, որ կ'ուղէր Պոլսոյ հայ համայնքին հանդիպիլ: Պատրիարքարանը նորոգութեան մէջ ըլլալով, ընդունելութիւնը տեղի կ'ունենար ղիմացը զտնուող սրահ մը:

Ժողովը կը բացուի Հինգշարթի առտու, Սեպտեմբեր 10-ին:

Ա.

Հռոմի ժողովին, Սեպտեմբեր 7-ին եւ 8-ին ղլխաւոր հարցը եղած է հրադադարը: Ռաֆայէլի յայտարարած է թէ այդ առընչութեամբ Հայաստանի եւ Ղարաբաղի պատասխանները ղոհացում տրւած են մինչ Ազրբեջանի նախագահը՝ Էլչիպէյ նախապայման կը դնէ Շուշի եւ Լաչինի պարպումը եւ հայկ. ջոկատներու քաշուիլը Ղարաբաղէն: Ռաֆայէլի Միացեալ - Նահանգները եւ ուրիշներ կը պնդեն որ առանց նախապայմանի ըլլայ հրադադարը: